

աշակերտք իմաստունք եւ սրբակեացք, կային ի միասին մեծք եւ փոքերք, սիրով հանդարտացեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս եւ յընթերցումն սուրբ գրոց» (Դաւր. 295) : Այժմեան Ս. Զօրաւորի Եկեղեցւոյ մասին է խօսքը :

Գեղեցիկ կը նկարագրէ Մովսէս վարդապետի գործունէութիւնը նոր «Անապատիս» մէջ Եսայի Կարճաւանեցի, որ Մովսիսի աշակերտներէն է եւ Անապատիս սաներէն : Սա 1625 թուին կ'օրինակէ «Յիսուս որդի» մը «ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում փայլէ վարդապետս մեր տէր Մովսէս քաջ բարունին յաշխարհէն Սիսակայ, յերկրէն որ կոչի Աճանան, ի գեղջէն Խոտանանու եւ յաթոռոյն Ստաթէի, որ այժմ կոչի Տաթեւ. որ լուսաւորէ զԱզգս Հայկազեան եւ ժողովեալ կրօնաւորական դաս եւ նորոգեաց զվանորայս եւ դանապատս կրկին հաստատեալ պայծառացոյց : Եւ ապա բազում աշակերտօք գնացեալ յԱյրարատեանն գաւառ, որ եւ անդ տիրեալ էր իշխան ոմն ազգաւ պարսիկ՝ Ամիրզօնայ անուն կոչեցեալ, քաջ եւ արի, հմուտ ի պատերազմ, մինչ զի յահէ նորա, որ չկայր նման նմա : Թէպէտ կրօնիւք այլազգի էր, սակայն բարեպաշտ եւ երկիւղած էր եւ քրիստոնէասէր, մինչ զի հանդիպել սրբոյս անդ՝ յոյժ փափագանօք ընկալեալ, եւ բազում սիրելութիւնս ցուցեալ եւ տուեալ տեղի մի, որ կոչի Անանիա առաքեալ, գեղեցիկ եւ վայելուչ ի